

ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY-ի
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ ՀԵՏ

Այսու գոհունակությամբ կը հաղորդենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Լոս Անճելըսի շրջանին մէջ տասը տարիներէ ի վեր գործող «Ողնածուծի Նուիրատուներու» Յանձնախումբի վարչական մարմինը՝ 12 հոգիներ, գլխաւորութեամբ Նախագահ Դոկտ. Ֆրիտա ճօրտընի, Չորեքշաբթի, Յունուար 27ին, 2010 Առաջնորդարան ժամանելով պաշտօնական այցելութիւն մը տուին թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին եւ ներկայացուցին 2010 թուի իրենց գործունէութեանց ժամանակացոյցը:

Սրբազան Հայրը ողջունեց անոնց ներկայութիւնը, քաջալերեց զիրենք եւ յայտնեց, թէ Առաջնորդարանը այս տարուան ընթացքին եւ մնայունօրէն զօրավիգ պիտի կանգնի անոնց նախաձեռնած ծրագիրներուն:

Սրբազան Հայրը առաջարկեց Առաջնորդարանի մէջ Աղօթքի Յատուկ Երեկոյ մը կազմակերպել եւ աղօթել բոլոր անոնց համար, որոնք առիթը չունեցան օգտուելու ողնածուծի բարիքէն եւ մահացան: Աղօթքի այս երեկոն ներկայներուն մէջ պիտի զօրացնէ հաւատքը եւ մարդասիրական ոգին:

Դոկտ. ճօրտըն Վարչական Մարմնի անունով իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ միշտ զօրավիգ կը կանգնի եւ կը քաջալերէ զիրենք: Ան անդրարածաւ նաեւ վերջերս Հայաստան կատարած իր այցելութեան եւ Սուրբ Էջմիածին ուխտագնացութեան: